ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 05» սեպտեմբերի 2018 թ. N 201-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով՝

կարգադրում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի փոփոխության պատճառով դպրոցի ապրանքանյութական արժեքների հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Արամ Խաչատրյան - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ, նախագահ

Նելսոն Սարգսյան – Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ

Բուրմունք Հովհաննիսյան –Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի գլխավոր մասնմագետ

Ադելինա Սահակյան - հանձնող

Արտուշ Հայրապետյան - ընդունող

Նարինե Մադաթյան - դպրոցի հաշվապահ

2. Հանձնաժողովին՝ /նախագահ՝ Արամ Խաչատրյան/ ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման աշխատանքներին ընդգրկել նաև դպրոցի նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը մեկշաբաթյա ժամկետում մատակարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ի. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ք.Գավառ